

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՍՈՒՆ ՏԱՐՈՒՄ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

1

Սովետական կարգերի հաստատումով Հայաստանում գիտության մյուս քնազավառների հետ միասին բարենպաստ պայմաններ և զարգացման լավ հեռանկարներ ստեղծվեցին նաև բանագիտության համար: Այն, ինչ նախկինում, ինքնուրույն պետականության բացակայության պատճառով, մեզանում կատարվում էր առանձին անհատների և ազգագրական, գավառագիտական և նման ընկերությունների նախաձեռնությամբ ու ջանքերով, այժմ սկսում է իրականացվել պետության հոգածությունը վայելող համապատասխան գիտահետազոտական հիմնարկների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ծրագրված, հետևողական գործունեությամբ:

Առաջին օջախը նորաստեղծ Սովետական Հայաստանում, որը անհրաժեշտ ուշադրություն է հատկացնում ժողովրդական բանահյուսությանը, դա Նրևանի պետական համալսարանն էր: 20-ական թթ. սկզբից համալսարանի պատմա-գրական ֆակուլտետի ծրագրի մեջ տեղ է գտնում նաև հայ ժողովրդական բանահյուսության բուհական դասընթացը (դասախոս՝ Մ. Աբեղյան): Ժողովրդական բանահյուսության դասավանդումը համալսարանում կարևոր նշանակություն է ունենում տվյալ առարկայից ապագա մասնագետների պատրաստման գործում: Սովետահայ ներկայիս բանագետների ավագ, միջին և կրտսեր սերնդի ներկայացուցիչների մեծ մասը Նրևանի համալսարանի սաներն են՝ Մ. Աբեղյանի ուսանողները և նրա ուսանողների ուսանողները:

Նրևանի պետական համալսարանին է պատկանում նաև բանագիտական անդրանիկ հետազոտության հրատարակման պատիվը: Խոսքը Մ. Աբեղյանի «Հին գուսանական ժողովրդական երգեր» աշխատության մասին է, տպագրված համալսարանի «Տեղեկագրի» 1927—1929 թթ. մի շարք համարներում և ապա լույս տեսած առանձին գրքով (1931 թ.): Աշխատության մեջ հմտորեն լուսաբանված են «հայրեն» կամ «հայերեն» անունով հայտնի մեր միջնադարյան ժողովրդական երգերի լեզուն, ոճը, բովանդակությունը, տարբերակները, ոտանավորի ու թմբ, հանգերի տեսակները, կապը XIX և XX դարերում Ակնի, Վանի և Հայաստանի ուրիշ կողմերում գրի առնված ժողովրդական սիրո, հարսանեկան, պանդխտության, օրորոցի և սգո երգերի հետ: Այդ աշխատությամբ գիտական լուծում ստացավ հայ բանասիրության մեջ տարիներ շարունակ վեճի առարկա դարձած «քուչակյան առասպելը»: Հերքելով այն կարծիքը, ըստ որի մեր միջնադարյան տաղարանների մեջ տեղ գրած «հայրեն» կամ «հայերեն» կոչված անանուն տաղերի մի զգալի մասը իբր թե պատկանում է վանեցի աշուղ Նահապետ Քուչակին (Տեվկանց և ուրիշներ), Մ. Աբեղյանը այդ տաղերի լեզվի, ոճի, բովանդակության, տարբերակների և այլ հատկանիշների հանգամանակից վերլուծությամբ ապացու-

ցում է, որ Քուչակին վերագրված հիշյալ տաղերը հայոց հին գուսանական ժողովրդական երգերն են: Գիտնականի հավաստմամբ դրանց մի մասը միջին դարերում, հայ գրականության վերածնության շրջանում, մուտք է գործել ձեռագիր տաղարանները և հասել է մեղ դրավոր ճանապարհով, մյուս մասը՝ արհեստական է ժողովրդի մեջ, բերանացի ավանդվելով՝ դարերի ընթացքում ենթարկվել նկատելի փոփոխությունների և այդ վիճակում գրի առնվել նոր ժամանակի բանահավաքների կողմից (Հ. Ճանիկյան, Գ. Գույումճյան և այլն)՝ գլխավորապես Ակնի և Հայաստանի մի քանի այլ շրջաններում:

Պետական երկրորդ կարևոր հաստատությունը, որը սովետական տարիներին նշանակալից աշխատանք է կատարել բանագիտության ասպարեզում, 1926 թ. հիմնադրված Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտն է (նախագահ՝ Մ. Աբեղյան):

Բանահյուսական նյութեր հայտնաբերելու և գրի առնելու նպատակով ինստիտուտն իր աշխատակիցների միջոցով 1926—28 թթ. հատուկ գիտական արշավախմբեր է կազմակերպում դեպի նորաստեղծ հանրապետության շրջանները: Այդ գիտարշավներից մեկը, որ գլխավորում է ազգագրագետ Երվանդ Լալայանը, 1926 թ. ամռանը մեկնում է Կոտայքի շրջանը: 40 օր մնալով հիշյալ շրջանում գիտարշավը հայտնաբերում և գրի է առնում շուրջ 400 հին ու նոր ժողովրդական քառյակներ, հինգ տասնյակի չափ հեքիաթներ, զրույցներ ու առակներ¹: Մյուս գիտարշավը, երաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանի գլխավորությամբ, նույն թվականին Ախտալի և Կոտայքի գյուղերում հայտնաբերում ու ձայնագրում է հիսուների չափ ժողովրդական երգեր²: Հաջորդ գիտարշավները, դարձյալ Սպ. Մելիքյանի գլխավորությամբ, 1927 թ. ամռանը և 1928 թվականին մեկնում են Արագածի շուրջն ընկած սասունցիների գյուղերը, Ապարանի, Ստեփանավանի, Փամբակի և Հաջիխալիի շրջանները: Հիշյալ վայրերում հայտնաբերվում և գրի են առնվում թվով 358 տարբեր տիպի ժողովրդական երգեր:

Դիտության և արվեստի ինստիտուտի բանագիտական կարևոր ձեռնարկումներից է նրա ղեկավարվածության և պատմա-հասարակագիտական բաժինների համատեղ ջանքերով 1928 թ. կազմակերպված ժողովրդական երգերին նվիրված հատուկ գիտաժողովը, որ տևում է 4 օր: Այդ ժողովում կարգացված գիտական զեկուցումներից հիշարժան են Սպ. Մելիքյանի «Ինչ ժողովրդական եղանակներ և ինչպես են հավաքված մինչև այժմ», «Ժողովրդական երգերի դամբաններ», Վ. Ղորղանյանի «Ժողովրդական երգերի հավաքման մեթոդները», Մ. Աբեղյանի «Ժողովրդական երգերի բառերի հավաքումը մինչև այժմ և ապագայում» և Դ. Լևոնյանի «Հայ աշուղական և ժողովրդական երգերի փոխհարաբերությունը» զեկուցումները:

Դիտաժողովի ընդունած որոշումների մեջ լավագույնս բացահայտված ևն երիտասարդ հանրապետության անդրանիկ գիտական հաստատության լուրջ մտահոգությունը հայրենի բառ ու բանը մոռացումից փրկելու ուղղությամբ և դրա իրականացման համար նախատեսվող ծրագրերն ու միջոցառումները³:

¹ Տե՛ս «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», 1927, № 2, էջ 220—225 (Ն. Լալայանի հաշվետվությունը):

² Տե՛ս նույն տեղում, էջ 227 (Սպ. Մելիքյանի զեկուցում-հաշվետվությունը):

³ Տե՛ս «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», 1928, № 4, էջ 190—193:

Գիտության ու արվեստի ինստիտուտը ձեռնարկում է Կոմիտասի կողմից ժամանակին դրի առնված 255 ժողովրդական երգերի ազգագրական ժողովածուն տպագրության պատրաստելու գործը, որը սիրահոգար հանձն է առնում և հաջողությամբ ի կատար է ածում ինստիտուտի գեղարվեստական բաժնի անդամ, Կոմիտասի նախկին աշակերտ Սպ. Մելիքյանը⁴:

Ինչպես իր ընդգրկած նյութի հարստությամբ ու բազմազանությամբ, այնպես էլ այդ նյութի հավաստիությամբ տվյալ ժողովածուն մեր երաժշտա-բանագիտական գրականության մեջ իրավացիորեն համարվում է հայ ժողովրդական երգերի դասական լավագույն հրատարակություններից մեկը: Այն հիմնական աղբյուր է հանդիսացել ոչ միայն հայ ժողովրդական երաժշտության առանձնահատկությունների գիտական ուսումնասիրության, այլև պրոֆեսիոնալ երաժշտության տարբեր տիպի երկերի ստեղծման համար:

Երևանի պետական համալսարանը և Հայաստանի գիտության ու արվեստի ինստիտուտը Սովետական Հայաստանի գիտական անդրանիկ օջախներն էին, որոնք իրենց շուրջը համախմբելով տվյալ բնագավառի առկա լավագույն մասնագետներին (Մ. Աբեղյան, Ե. Լալայան, Սպ. Մելիքյան, Կ. Մելիք-Օհանջանյան), վերջիններիս գործադրած եռանդուն ջանքերի շնորհիվ կարողացան դնել սովետահայ բանագիտության ամուր հիմքերը:

Առանձնապես գնահատելի է գիտության և արվեստի ինստիտուտի կողմից ավանդական հայ բանահյուսության թանկարժեք նշխարների հայտնաբերման և գրառման ուղղությամբ տարված ծրագրված և հետևողական մեծ աշխատանքը:

Յուրահատուկ շուտափուլյի օգնություն էր դա, որ ցույց էր տրվում ինստիտուտի կողմից ավանդական հայ բանահյուսությանը՝ փրկելու համար այն վերահաս կորստից, որ սպառնում էին նրան կյանքում կատարված հասարակական-քաղաքական մեծ հեղափոխումները և վերջիններիս հետևանքով հայ գյուղացու կենցաղի, հոգեբանության ու աշխարհայացքի մեջ կատարված արմատական տեղաշարժերն ու փոփոխությունները:

1931 թ. Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի հիմքի վրա կազմակերպվում է Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտը: Հայագիտության այլ բնագավառների հետ նոր ինստիտուտը իր գիտահետազոտական աշխատանքների ծրագրի կարևոր կետերից մեկը դարձնում է ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության գործը: Այդ նպատակի համար ինստիտուտի կազմում հիմնվում է համապատասխան բաժին, որի ղեկավարն է նշանակվում բանագետ Կ. Մելիք-Օհանջանյանը:

Հետևելով գիտության և արվեստի ինստիտուտի օրինակին, կուլտուրայի պատմության ինստիտուտը ևս իր առաջնահերթ խնդիրն է համարում կորստյան ենթակա բանահյուսական նյութերի հայտնաբերումն ու գրառումը:

Կ. Մելիք-Օհանջանյանի և Սպ. Մելիքյանի գլխավորությամբ ինստիտուտը 1932—1933 թթ. հատուկ զիտարշավներ է կազմակերպում դեպի Սովետական Հայաստանի զանազան շրջանները (Աշտարակ, Թալին, Վեդի և այլն):

⁴ Կոմիտաս, ժողովրդական երգեր (Ազգագրական ժողովածու), հայերեն նոտագրությունից փոխագրեց եվրոպականի, առաջաբանով և դիտողություններով Սպիրիդոն Մելիքյանը, ՀՍԽՀ Պետհրատ, 1931:

⁵ Տե՛ս Ա. Թադևոսյան, Սպիրիդոն Մելիքյանը և հայ ժողովրդական երգը, Երևան, 1964, էջ 194:

Հայտնաբերվում ու գրի են առնվում բազմաթիվ արժեքավոր բանահյուսական և երաժշտական ստեղծագործություններ: Դրանցից հիշարժան են «Սասնա ծռերի» վեց նոր պատումները Սասունի, Ալաշկերտի, Մոկաց և Շատախի բարբառներով, «Մուշեղի բաղնիքներ» կոչված պատմական ուշագրավ ավանդությունը, «Արշակ խան» հետաքրքրական հեքիաթը, «Մոկաց-Միրզա» և «Ասլան աղա» հայտնի վիպերգների մի քանի նոր տարբերակներ, բազմաթիվ առակներ, երգեր և այլն:

Գիտարշավներին մասնակցել են ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժնի աշխատակիցները:

Ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինը տարիների ընթացքում շնորհակալ աշխատանք է կատարել նաև մասնավոր մարդկանց մոտ և զանազան հիմնարկներում ցրված արժեքավոր բանահյուսական ձեռագրերի հայտնաբերման, կենտրոնացման և գիտական մշակման ուղղությամբ: Հիշարժան է Ե. Լալայանի 1915—1916 թթ. բանահյուսական արշավախմբի գրի առած նյութերի ձեռքբերման և մշակման գործը: 1915—1916 թթ. Երվանդ Լալայանը «Ազգագրական հանդեսի» նախկին աշխատակիցներից և արևմտահայ մի քանի բանահավաք-ուսուցիչներից (Արտաշես Բարսեղյան, Սենեքերիմ Շալճյան, Շահեն Կուժիկյան, Նազարեթ Մարտիրոսյան, Երվանդ Պեղազյան) կազմակերպում է մի հատուկ խումբ, որը շրջելով Անդրկովկասի հայաբնակ վայրերը (Թիֆլիս, Ղարաբաղի խուս, Ալեքսանդրապոլ, Էջմիածին), այստեղ ապաստան գտած վանեցի, ողմեցի, շատախցի, մշեցի, ալաշկերտցի, սասունցի գաղթականներից գրի է առնում 1000-ի չափ հեքիաթներ, հարյուրավոր առակներ, զրույցներ, երգեր և այլն:

Ձեռք բերելով քաղաքական և տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով տարիներ շարունակ Հայաստանի պատմական թանգարանի ազգագրական բաժնի արխիվում անմշակ և չօգտգործված վիճակում մնացած վերոհիշյալ նյութերը, ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինը 1932—1934 թթ. ձեռնամուխ է լինում դրանց ցուցակագրման, դասակարգման և հեքիաթների բովանդակության համառոտությունների պատրաստման աշխատանքին, դրանով իսկ մատչելի դարձնելով այդ նյութերը գիտական օգտագործման համար⁶:

2

Ժողովրդական բանահյուսության հայտնաբերման, գրառման և ուսումնասիրության աշխատանքները ինչպես Սովետական Միության մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում նոր փուլի մեջ են մտնում և մեծ թափ են ստանում 1934 թվականից հետո: Դրան ազդակ է հանդիսանում սովետական գրողների համամիութենական առաջին համագումարում Մաքսիմ Գորկու կողմից ժողովրդական բանահյուսության կուլտուր-պատմական, ճանաչողական և դրական-գեղարվեստական դերին տրված բարձր գնահատականը, այդ բանահյուսության լավագույն ստեղծագործությունները գրի առնելու և ուսումնասիրելու վերաբերյալ մեր երկրի բազմազգ գրողներին հասցեագրված նրա հայտնի դիմում-կոչը:

⁶ Բաժնի հանձնարարությամբ այդ աշխատանքը կատարել է տողերիս գրողը: Հիշյալ նյութերը ներկայումս պահվում են Հայկական ՍՍՀ ԳԱ ազգագրության և հնագիտության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժնի արխիվում:

Մեծ գրողի պատմական այդ կոչը շրջադարձային նշանակություն է ունենում սովետական բանագիտության համար: Ժողովրդական բանահյուսությունն այդ օրվանից դառնում է բազմակողմանի և լայն ուշադրության առարկա: Նախկինի համեմատ ավելի շատ բանահյուսական նյութեր և հոգվածներ ձև սկսում տպագրել պարբերական հրատարակությունները: Հիմնվում են միութենական և հանրապետական բնույթի հատուկ տներ, որոնք ղբադվում են ժողովրդական բառ ու բանի, երգ-երաժշտության, կիրառական արվեստների վերաբերյալ նյութերի հայտնաբերումով, գրառումով ու ցուցադրությամբ: Առավել բեղմնավոր է դառնում համապատասխան գիտահետազոտական հիմնարկների գործունեությունը: Վերջիններիս կողմից հաճախակի կազմակերպվում են բանագիտական խմբարշտավներ, կրկնապատկվում է բանահյուսական նյութերի ժողովածուների, բանագիտական ուսումնասիրությունների հրատարակման գործը, քննության հատուկ առարկա է դառնում հին, նոր և նորագույն գրողների երկերի բանահյուսական ակունքների հարցը, բազմապատկվում է բանագիտական թեմաներով կարդացվող ղեկուցումների թիվը, բուհերի ծրագրի մեջ ավելի լայն տեղ է հատկացվում ժողովրդական բանահյուսության դասընթացին:

Կուլտուրայի պատմության ինստիտուտին փոխարինած Հայաստանի պատմության և գրականության ինստիտուտը 1934—1939 թթ. ընթացքում իր ժողովրդական բանահյուսության բաժնի բանահավաք աշխատակիցներին պարբերաբար գործուղում է հանրապետության շրջանները (Վաղարշապատ, Լենինական, Զանգեզուր, Դիլիջան, Իջևան և այլն) և Հայաստանից դուրս գտնվող հայաշատ վայրերը (Բոգդանովկա, Ախալքալաք և այլն) տեղի ավանդական և ժամանակակից բանահյուսության նյութերը հայտնաբերելու և գրի առնելու համար: Հայ վիպական բանահյուսությունից գրի են առնվում մեծ քանակությամբ հեքիաթներ, ավանդություններ, զրույցներ, առակներ, քրնարական բանահյուսությունից՝ աշխատանքի, սիրո և այլ տիպի երգեր, փոքրածավալ ժանրերից՝ առածներ, ասացվածքներ, հանելուկներ և այլն: Բավական շատ նյութեր են հայտնաբերվում և գրառվում նաև ժամանակակից ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործություններից (Հոկտեմբերյան հեղափոխության, Լենինի, քաղաքացիական կռիվների, նուկենցաղի և այլնի մասին): Այս ուղղությամբ առանձնապես բեղմնավոր ու շնորհակալ գործ են կատարում սկզբում՝ բանահավաք-աշուղագետ Գեղամ Թարվերդյանը (1934—1937 թթ.), ապա՝ բանահավաք-ազգագրագետ Վարդ Բդոյանը (1937—1939 թթ.):

1936 թվականին պատմության և գրականության ինստիտուտը լույս է ընծայում Լենինին նվիրված հայերեն չափածո և արձակ բանահյուսական ստեղծագործությունների (երգ, վիպերգ, հեքիաթ) առաջին ծավալուն ժողովածուն՝ «Լենինը հայ ֆուկլորի մեջ» ընդհանուր խորագրի տակ: Գրքի խմբագիր Կ. Մելիք-Օհանջանյանը ժողովածուին կցված իր ընդարձակ ներածության մեջ Սովետական Միության տարբեր ազգերի, մասնավորապես սովետական Արևելքի և Հյուսիսի ժողովուրդների բանարվեստի բնորոշ ստեղծագործությունների հիման վրա բնութագրում է արդի բանահյուսության գլխավոր ժանրերը, բովանդակության ու ձևի առանձնահատկությունները, համեմատելով այն նույն այդ ժողովուրդների ավանդական բանահյուսության հետ: Բանագիտը հատկապես կանգ է առնում սովետական բանահյուսության Լե-

նիւնյան ստեղծագործութիւնները՝ վրա, բացահայտում վերջիններիս գաղափարական և գեղարվեստական հատկանիշները՝:

Այս ժողովածուն իր ընդարձակ ներածական ուսումնասիրութեամբ ոչ միայն սովետահայ, այլև սովետական բանագիտութեան լենինյան թեմային նըվիրւած՝ ժամանակով առաջին ծավալուն և ուշագրաւ գործերից մեկն էր, որտեղ արծարծւում էին ժամանակակից ժողովրդական ստեղծագործութեան բովանդակութեան ու ձևի առանձնահատկութիւններին վերաբերող արդիական նշանակութիւն ունեցող կարևոր հարցեր:

1936 թվականը սովետահայ բանագիտութիւնը հարստացնում է մի ուրիշ կարևոր գործով ևս: Հայաստանի պետական հրատարակչութիւնը լույս է ընծայում Մանուկ Աբեղյանի խմբագրութեամբ և Կարապետ Մելիք-Օհանջանյանի աշխատակցութեամբ իրականացւած մեր ազգային-ժողովրդական դճուցազնավեպի սկզբնաղբյուր պատումների լիակատար հրատարակութեան առաջին հատորը «Սասնա ծռեր» ընդհանուր խորագրով: Հատորն ընդգրկում է վեպի մինչև այդ հրատարակւած, անտիպ և նոր գրի առնւած թվով 25 պատումներ, դիւանավորապես Վանի բարբառով և վերջինիս ենթաբարբառներով (Մոկա, Շատախ, Կաճեթ և այլն), հանդերձ գիտական հարուստ ապարատով (Ներածութիւն, Ընդհանուր նախաբան, նախաբան առաջին հատորի, Բարբառային քերականական գիտելիքներ): Յաւոք, կարևոր այս աշխատութեան շարունակութեան տպագրութիւնը պատրաստողներից անկախ պատճառներով բավական ձգձգւում է: «Սասնա ծռերի» երկրորդ հատորի առաջին մասը լույս է տեսնում 1946 թ. և ընդգրկում է 10 պատում Մշո և Սասունի բարբառներով: Երկրորդ հատորի վերջին մասը լույս է տեսնում 1951 թ. և ընդգրկում է 14 պատում՝ Հին Բայազետի, պարսկահայոց և այլ բարբառներով: Առաջին հատորի նման երկրորդ հատորը ևս ունի գիտական անհրաժեշտ ապարատ (Քերականական գիտելիքներ, Տեղագրութիւն, Օտար և դժվար հասկանալի բառերի բառարան, Մանրթութիւններ, Պատումների ճշուղագրութիւն, Հատուկ անունների ցանկ և Առարկայական ցանկ):

«Սասնա ծռերի» հրատարակութիւնը կուտուր-պատմական մնայուն արժեք ներկայացնող իսկական մի կոթող է, հայ ժողովրդի լինելութեան իրավունքը հաւաստող ու հաստատող մի նոր խոսուին վալերական: Այն պատրաստող գիտնականներ Մանուկ Աբեղյանի և Կարապետ Մելիք-Օհանջանյանի անունների հետ հայ ժողովուրդը միշտ երախտագիտութեամբ պետք է հիշինաւ նրա տպագրութիւնը նախաձեռնողների ու իրականացնողների՝ Հայաստանի կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտեի այն ժամանակվա առաջին քարտուղար Ադասի Խանջյանի և Պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ Եղիշե Չարենցի անունները:

Հայաստանի պատմութեան և գրականութեան ինստիտուտը 1937 թ. հրատարակում է տողերիս գրողի «Հայ շինականի աշխատանքի երգերը» խորագրով գիրքը⁷: Վերջինիս մեջ ի մի են բերւած և ըստ բովանդակութեան խմբավորւած են մեր գեղջկական աշխատանքի երգերի սարբեր տեսակների (դոթանի, հնձի, կալի, սանդի, ճախարակի, խնոցու և այլն) տպագիր, ան-

⁷ Տե՛ս «Վենինը հայ ֆուկլորի մեջ», խմբագրութիւն և ներածութիւն Կ. Մելիք-Օհանջանյանի, աշխատակցութեամբ՝ Ի. Թարվերդյանի և Ա. Ղանալանյանի, Երևան, 1936, էջ 9—56:

⁸ Այն տակալին ձեռագիր վիճակում 1935 թ. արժանանում է Մելքոնյան մրցանակի:

տիպ և նոր գրի առնված հարյուրավոր նմուշներ, անհրաժեշտ ծանոթագրություններով ու աղբյուրներով, հանգամանորեն լուսաբանված են աշխատանքի հրգերի ծագման հանգամանքները, բովանդակության մոտիվները, մեղեդին, ռիթմը, հորինման արվեստը և այլն:

Աշխատությունը սովետական տարիներին հայ ժողովրդական երգերի հրատարակման և ուսումնասիրության ուղղությամբ կատարված առաջին գործերից մեկն է: Այն ամբողջական պատկերացում է տալիս մեր բանահյուսության ամենահին և նշանակալից բաժիններից մեկի բնույթի ու էության մասին և վերացնում է տվյալ ուղղությամբ հայ բանագիտության մեջ գոյություն ունեցող նկատելի բացը (մինչև այս գրքի լույս տեսնելը, բացի երգերի մի քանի նմուշներից, առանձին դիտողություն-ակնարկներից և մեկ լրագրային հոդվածից, աշխատանքի երգերի վերաբերյալ մեղանում ուրիշ բան չի հղել տեղ-պագրված):

Նույն ինստիտուտը 1938 թ. լույս է ընծայում «Հայկական խորհրդային ֆուկլորը» խորագրով մի ժողովածու, որով առաջին անգամ ընթերցող հասարակայնությանն է ներկայացվում ինստիտուտի ժողովրդական բանահյուսությունն բաժնի բանահավաք Գ. Թարվերդյանի կողմից տարիների ընթացքում հայտնաբերված ու գրի առնված ժամանակակից հայ ժողովրդական բանահյուսության առավել բնորոշ նմուշները՝ դասավորված համապատասխան թեմատիկ խմբերի մեջ («Լենին», «Քաղաքացիական կռիվներ», «Հայաստանը խորհրդային», «Կոլխոզային կյանք», «Նոր կենցաղ» և այլն):

3

Սովետահայ, ինչպես և առհասարակ հայ բանագիտության պատմության մեջ իր նշանակությամբ եղակի տարբերվ է հանդիսանում 1939 թվականը, երբ Հայաստանի կառավարության նախաձեռնությամբ հանդիսավորությամբ նշվեց «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակը: Իսկական համազգային մի փառատոն էր դա, հայոց հնադարյան մշակույթի յուրահատուկ ստուգատեսը, որին մասնակցեցին նաև Սովետական Միության մյուս ժողովուրդները:

Իր ազգային-հասարակական մեծ նշանակության հետ մեկտեղ «Սասունցի Դավիթ» հոբելյանը զգալիորեն խթանեց նաև հայ էպոսագիտության զարգացմանը: Լույս տեսան մի շարք ուշագրավ գրքեր ու հոդվածներ, որոնց մեջ լուսաբանվեցին մինչ այդ լավ չուսումնասիրված կամ ձիշտ չմեկնաբանված այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են մեր վեպի ժանրային, գեղարվեստական առանձնատկությունների, նրա պատմա-փիլիսոփայության, գաղափարական բովանդակության, ուրիշ ժողովուրդների վիպական ստեղծագործությունների հետ ունեցած ընդհանրության և այլ հարցեր: Այս տեսակետից հիշարժան են.

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի զրականության և լեզվի, պատմության և հնագիտության ինստիտուտների և Երևանի պետական համալսարանի կողմից 1939 թ. հրատարակված «Սասունցի Դավիթ» համանուն խորագրերով երկու ժողովածուները, ուր տեղ գտած գիտական հոդվածներից հատկապես արժեքավոր են Մ. Արևիլյանի «Մատենագրություն Սասունցի Դավիթ հայ ժողովրդական վեպի մասին» և Դ. Դեմիրճյանի «Սասունցի Դավիթը որպես հայ ժողովրդի պատմություն և փիլիսոփայություն» հոդվածները:

Հայկական ՍՍՀ պետական հանրային գրադարանի կողմից նույն թվականին հրատարակված «Սասունցի Դավիթ» խորագրով մատենագրությունը, որն ընդգրկում է Գարեգին Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» զրբույկի լույս տեսնելուց (1874 թ.) մինչև 1939 թ. հուլիս ամիսը մեր վեպի Պերաբերյալ տպագրված հայերեն և ռուսերեն լեզուներով նյութերի ու գրականության (պատումների հրատարակություններ, հետազոտություններ, հոդվածներ, գրական մշակումներ, գրախոսականներ և այլն) լիակատար ցանկը⁹:

«Սասունցի Դավիթ» հոբելյանը առիթ հանդիսացավ հայկական էսոսին նվիրված մի ուրիշ կարևոր գրքի ստեղծման համար ևս: Խոսքը 1939 թ. լույս տեսած վեպի համահավաք հյուսվածո բնագրի մասին է (բաղկացած շուրջ 10.000 տողից), ուր ի մի են բերված «Սասնա ծռերի» 50-ից ավելի պատումների մեջ եղած այն բոլոր դրվագները, որոնք ներքնապես կապված են վեպի սյուժեի զարգացման հետ և չեն հակասում նրա ամբողջական կառուցվածքին ու ոգուն¹⁰: Ծիշտ է, համահավաքը լիովին չի կարող բավարարել մասնագետի պահանջները, սակայն այն, իբրև բաղմամբիվ պատումներից կատարված ուրույն մի ծաղկաքաղ, իր պարզ ու հասկանալի լեզվով ժամանակին շնորհակալ դեր կատարեց և այժմ էլ կաբող է կատարել «Սասունցի Դավիթ» բովանդակության և գեղարվեստական արժանիքների մասին ընդհանուր պատկերացում տալու գործում:

Սովետահայ բանագիտության տարեգրության մեջ արգասավոր են 1940—1941 թվականները: 1940 թվականին լույս են տեսել Մանուկ Աբեղյանի «Գոսանական տաղեր» և «Ժողովրդական խաղիկներ» խորագրերով երկու մեծարժեք հատորները, ուր բաղմամբիվ գրավոր ու բանավոր աղբյուրներից հայտնաբերված և գիտական դասակարգման են ենթարկված թվով 502 գոսանական տաղեր («հայրեններ») և 3433 գյուղական խաղիկներ («ջանգյուղումներ») իրենց բաղմամբիվ տարբերակներով, լուսաբանված են նրանց ստեղծման ժամանակն ու հանգամանքները, հասարակական բովանդակությունը, հեղինակային պատկանելությունը, տաղաչափական կառուցվածքը, տարբերակները, դեղարվեստական պատկերավորման առանձնահատկությունները, լեզուն, ոճը և այլն:

Բաղմավաստակ բանագետի տասնամյակների տքնաջան աշխատանքով և մասնագիտական մեծ հմտությամբ գլուխ բերված հիշյալ հատորները հայ բանագիտության մնայուն կոթողներից են: Նշանակալից է ոչ միայն նրանց մեջ ամփոփված հարուստ ու թանկարժեք նյութը, այլև բանագիտական-բանասիրական այն օրինակելի սկզբունքները, որով համադրված, խմբագրված ու մատուցված է այդ նյութը:

1941 թ. լույս է տեսել տողերիս գրողի «Աբովյանը և ժողովրդական բանահյուսություն» խորագրով աշխատությունը, ուր ի մի են բերված և ժանրային խմբավորման են ենթարկված Աբովյանի գրի առած, օգտագործած և ուրիշներին պատմած ժողովրդական բառ ու բանի բաղմամբիվ նմուշներ (ժո-

⁹ Բերլիոգրաֆիան կաղմել են Մ. Բարալանը և Ս. Միքայելյանը, ներածությունը գրել և գիրքը խմբագրել է Մանուկ Աբեղյանը:

¹⁰ «Սասունցի Դավիթ», հայկական ժողովրդական էպոս, տեքստը կազմեցին՝ պրոֆ. դոկտ. Մ. Աբեղյան, պրոֆ. Ի. Աբով, ավագ գիտ. աշխ. Ա. Ղանալանյան, ընդհ. խմբագրություն և առաջարան ակադեմիկոս Հ. Ա. Սրբելու, Իրևան, 1939:

զովրդական և աշուղական երգեր, առած-ասացվածքներ, ավանդություններ, զրույցներ, անեկդոտներ, հեքիաթներ), բացահայտված են հայ մեծ լուսավորչի ժողովրդական բանահյուսության հետ ունեցած կապի անձնական-կենսագրական և հասարակական-գաղափարական արմատները, տրված է նրա կատարած բանահավաքչական աշխատանքի գնահատականը, լուսաբանված է այն տեղն ու դերը, որ ունեցել է ժողովրդական բանահյուսությունը Աբովյանի մանկավարժական գործունեության և հատկապես նրա դրական ստեղծագործության մեջ (մեջբերումներ, մշակումներ, փոխադրություն-թարգմանություններ, նմանողություններ): Հանդիսանալով գրականության և ժողովրդական բանահյուսության միջև եղած կապերի ուսումնասիրության անհրաժեշտության վերաբերյալ սովետական գրողների առաջին համագումարում Մ. Դորկու առաջ քաշած հայտնի դրույթի յուրահատուկ արձագանքը, «Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը» աշխատությունը գալիս էր վերացնելու այդ ուղղությամբ աբովյանագիտության մեջ եղած բացը:

Հայրենական պատերազմի տարիներին (1941—1945 թթ.) գիտության մյուս բնագավառների հետ մեղանում վերակառուցվում են նաև ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության ասպարեզում տարվող աշխատանքները: Սկզբնաղբյուրների դիտական հրատարակություններին և բանահյուսական առանձին ժանրերին նվիրված մենագրական հետազոտություններին փոխարինում են ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ դարերի ընթացքում արձագանք գտած հերոսության, ազատասիրության, հայրենասիրության, աշխատանքի ու խաղաղության թեմաների ու գաղափարների վերաբերյալ գիտա-մասսայական բնույթի հողվածներն ու բրուշյուրները, բանահավաքների ուշադրության հիմնական առարկա է դառնում պատերազմի տարիներին ճակատում և թիկունքում ստեղծված ժողովրդական երգերի, առակների, անեկդոտների, անեծքների և ուրիշ հորինվածքների հայտնաբերման, գրառման ու հրատարակման գործը: Այդ կարգի աշխատանքների օրինակներ են Հայաստանի ժողովրդական ստեղծագործության տան կողմից 1942 թ. հրատարակված «Հայ աշուղներն ու հորինողները հայրենական պատերազմի օրերին» բանահյուսական ժողովածուն, տողերիս գրողի «Հայ ժողովրդի հերոսապատումները» (1942 թ.), «Թշնամու կերպարը հայկական հին բանահյուսության մեջ» (1943 թ.) գրքույկները և այլն:

4

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո մեր երկիրը վերստին մտնում է իր ստեղծագործ ու շինարար աշխատանքի բնական հունը: Գիտության ուրիշ բնագավառների հետ մեղանում ուժեղ թափով սկսում է զարգանալ նաև բանագիտությունը:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, իսկ ավելի ուշ (1959 թվականից) նույն ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինները ձեռնարկում և տարեց-տարի ի կատար են ածում ինչպես բանահավաքչական, այնպես էլ բանագիտական բաղմամբով նշանակալից գործեր: Հիշատակենք դրանցից առավել կարևորները.

1945—1950 թթ. բանահյուսական նոր նյութեր հայտնաբերելու և դրի առնելու նպատակով պարբերաբար դեպի Հայաստանի շրջանները և հարևան

հանրապետությունների հայաշատ վայրերն են գործուղվում բաժնի հաստիքային բանահավաքներ Վարդ Բղոյանը և Սերո Խանդաղյանը: Վերջիններիս եռանդուն ջանքերով էջմիածնի, Աշտարակի, Ղուկասյանի, Զանգեզուրի, Ախալքալաքի և այլ շրջաններում հայտնաբերվում ու գրի են առնվում զգալի բանակությամբ արժեքավոր բանահյուսական նյութեր (հեքիաթ, առակ, ավանդություն, երգ և այլն):

Նույն նպատակով 1960—1969 թթ. հատուկ գիտարշավներ են առաքվում Բջևանի, Նոյեմբերյանի, Կարմիրի, Ստեփանավանի, Լենինականի, Աշտարակի, Լեռնային Ղարաբաղի, Գանձակի, Բոզդանովկայի, Ախալքալաքի և այլ շրջաններ: Այդ գիտարշավներին մասնակցում են նախ Մ. Աբեղյանի անվան պրականության ինստիտուտի և ապա հնագիտության ու ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժնի աշխատակիցներ Ա. Նազիրյանը, Ս. Հարությունյանը, Ա. Կարապետյանը, Մ. Առաքելյանը, Վ. Սվազլյանը, Ռ. Գրիգորյանը, Ա. Ղազիյանը, Թ. Գևորգյանը, Վ. Ավագյանը, Վ. Սահակյանը:

Բանահավաքչական աշխատանքների հետ միասին հիշյալ ինստիտուտների ժողովրդական բանահյուսության բաժինների աշխատակիցները (նաև այդ բաժիններից դուրս գտնվող բանագետները) լրջորեն ղեկավարում են նաև ավանդական և ժամանակակից բանահյուսության հարցերի ուսումնասիրություններ, տարիների ընթացքում պարբերաբար հրապարակ բերելով բանագիտական մի շարք արժեքավոր դործեր: Այդ գործերից կարևորներն են.

Տոդերիս գրողի «Հայկական առածանի» և «Ավանդապատում» վերնագրերով աշխատությունները (1951, 1969 թթ.), ուր ի մի են բերված և գիտական դասակարգման են ենթարկված շուրջ 40.000 տպագիր, անտիպ և նոր գրքի առնված առած-ասացվածքներ և 900-ից ավելի ավանդություններ ու ավանդական դրույցներ իրենց բաղմաթիվ տարբերակներով, լուսաբանված ու վերլուծված են դրանց ժանրային առանձնահատկությունները, ծագման հանգամանքները, ազգային և միջազգային բնույթի, հասարակական բովանդակության, հորինման, արվեստի հարցերը:

Հովսեփ Օրբելու «Հայկական հերոսական էպոսը» (1956 թ.), ուր քննարկված են «Սասունցի Դավիթ» բովանդակության, կերպարների, պատմական միջուկի, ձևավորման, մյուս ժողովուրդների էպիկական դրույցների հետ ունեցած ընդհանրության հարցերը, քննադատված են էպոսի մասին հայ և այլազգի որոշ բանագետների հայտնած սխալ կարծիքները, կատարված են ինքնատիպ գիտողություններ ու ընդհանրացումներ: Ինույն աշխատությունը նույն թվին լույս է տեսնում նաև ռուսերեն):

Ա. Նազիրյանի «Սովետական ժողովրդական բանահյուսությունը» (1957 թ.), ուր վերլուծված են ընդհանրապես սովետական շրջանի ժողովրդական բանահյուսության բնույթի, առանձնահատկությունների և հատկապես սովետահայ բանահյուսության անցած հիմնական փուլերի, նրա ընդգրկման շրջանակների հարցերը, համապատասխան փաստական նյութի հիման վրա լուսաբանված են այդ բանահյուսության գաղափարական բովանդակությունը, գլխավոր թեմաներն ու մոտիվները:

«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական բաղմահատորյակի տուրքին, հրկրորդ (1959 թ.), երրորդ (1962 թ.), չորրորդ (1963 թ.), հինգերորդ (1966 թ.), իններորդ (1968 թ.) և տասերորդ (1967 թ.) հատորները:

Առաջին, երկրորդ և երրորդ հատորներն ընդգրկում են Արարատյան դաշտի՝ Աշտարակ, Օշական, Փարպի, Վաղարշապատ, Շահրիար, Զաֆարաբադ, Գրամփա և Սուրմալուի շրջանի Կուլաբլու, Ալիճան գյուղերի հեքիաթները (հատորները պատրաստել և նախաբանները գրել է Ա. Նաղինյանը)։

Չորրորդ հատորն ընդգրկում է Շիրակի դաշտավայրի պատմական Կումայրի քաղաքի և նրա շրջակայքի՝ Ախուրյանի, Աղինի, Արթիկի, Ապարանի, Ղուկասյանի, ինչպես նաև պատմական Հայաստանի Բասենի, Կարնո, Զավախքի և Տայքի շրջանների հեքիաթները (հատորը պատրաստել և նախաբանը գրել է Մ. Մկրտչյանը)։

Հինգերորդ հատորը ընդգրկում է Արցախի նահանգի Զրաբերդ, Գյուլիստան, Խաչեն և Դիզակ գավառների հեքիաթները (հատորի բնագիրը և ծանոթագրությունները՝ Ա. Նաղինյանի և Մ. Գրիգորյան-Սպանդարյանի, նախաբանը՝ Ա. Նաղինյանի)։

Իններորդ հատորն ընդգրկում է պատմական Հայաստանի Բագրևանդ գավառի (Ալաշկերտ) և Մանաղկերտի ու Բաղեշի (Բիթլիս) հեքիաթները (հատորը պատրաստել և առաջաբանը գրել է Մ. Մկրտչյանը)։

Տասներորդ հատորն ընդգրկում է պատմական Հայաստանի Տուրուբերան նահանգի Հարք գավառի (Մուշ-Բուլանլիս) հեքիաթները (հատորը կազմել, ծանոթագրել և նախաբանը գրել է Ս. Տարոնցին)։

Գ. Գրիգորյանի «Հայ ժողովրդական հերոսական էպոսը» (1960 թ.), ուր տրված է «Սասունցի Դավիթ» էպոսի ուսումնասիրության պատմությունը, վերջինիս անցած տարբեր փուլերի քննական վերլուծությունը, բացահայտված են հայկական էպոսի գաղափարական բովանդակության հիմնական գրծերը (ազատագրական և սոցիալական պայքար արտաքին ու ներքին ճնշողների դեմ, պատերազմ ու խաղաղություն, աշխատանքի, խաղաղության և ժողովուրդների համերաշխության ջատագովություն և այլն), արտահայտչական միջոցները (անձնավորում, չափազանցություն, կրկնություն և այլն)։

Ս. Հարությունյանի «Հայ ժողովրդական հանելուկները»՝ բաղկացած երկու առանձին գրքերից (1960, 1965 թթ.), որոնցից առաջինի մեջ մանրամասն հետազոտված է հայկական հանելուկների բովանդակությունը, ժանրային, գեղարվեստական և տաղաչափական առանձնահատկությունները, իսկ երկրորդի մեջ ի մի են բերված և թեմատիկ դասակարգման են ենթարկված 2000-ից ավելի տպագիր, անտիպ և նոր գրի առնված հանելուկներ իրենց բաղմամբիվ տարբերակներով։

Մանուկ Աբեղյանի «Նրկերի» դիտական հրատարակության Ա և Բ հատորները (1966, 1967 թթ.), որոնք ամփոփում են հեղինակի տասնամյակներ առաջ տպագրած կարևոր ուսումնասիրությունները հայ վիպական և քնարական բանահյուսության վերաբերյալ («Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ», «Հայ ժողովրդական վեպը», «Վիպական երգեր», «Հին գուսանական ժողովրդական երգեր», «Ժողովրդական խաղիկներ»)։

Ա. Մարտիրոսյանի «Պատմութիւն եւ իւրաւոք խիկարայ իմաստնոյ» աշխատությունը (1969 թ.), ուր ներկայացված է Արևելքի բանահյուսական հնագույն և նշանավոր հուշարձաններից մեկի հայկական խմբագրության տպագիր ու ձեռագիր տարբերակների քննական բնագիրը, խիկարի զրույցի և նրա

աղբյուրների մասին համապատասխան առաջաբանով, աղյուսակներով ու աղբյուրներով։

Ա. Մրապյանի «Հայ միջնադարյան գրույցները» (1969 թ.), ուր քննության առարկա են դարձել Երևանի Մաշտոցյան մատենադարանում պահպանված հայկական միջնադարյան գրույցների ժանրային առանձնահատկությունների, բնույթի, դարգացման, ժամանակի, բովանդակության, գեղարվեստական առանձնահատկությունների, լեզվի, ոճի հարցերը (աշխատությանը կցված են նաև գրույցների հատընտիր բնագրերը)։

Թվարկված աշխատություններով չի սահմանափակվում վերջին հիսուն տարում Սովետական Հայաստանում լույս տեսած բանագիտական գործերի ցանկը։ Բացի այդ, ինչպես առանձին գրքերով, այնպես էլ պարբերական հանդեսներում («Պատմա-բանասիրական հանդես», «Էրաբեր» և այլն) նշված ժամանակաշրջանում մեզանում հրատարակվել են ոչ քիչ թվով ուրիշ, ավելի կամ պակաս նշանակալից բանագիտական աշխատանքներ ևս, որոնց մի առ մի անդրադառնալը դուրս է մեր ծրագրից։ Առանձին գրքերով լույս տեսած այդպիսի աշխատանքներից են Գ. Թաւրվերդյանի կազմած «Հայ աշուղներ» անտիպ երգերի ժողովածուն (1937 թ.), առղերիս գրողի «Պոռշյանը և ժողովրդական բանահյուսությունը» (1938 թ.), «նմուշներ հայկական հակակրոնական ֆուկլորից» (1938 թ.), «Սասունցի Դավիթ հայ ժողովրդական վեպը» (1939 թ.), «Հայ ժողովրդական բանահյուսություն» բուհական ձեռնարկի չորս պրակները (1945—1946 թ.թ.), «Հայ ժողովրդական հեքիաթներ» մեկ հատորյակը (1950 թ.), «Ալ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները» (1953 թ.), «Ժողովրդական բանահյուսության մի քանի հարցեր» (1954 թ.), «Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքներ» (1963 թ.), Գր. Գրիգորյանի «Հատընտիր հայ ժողովրդական բանահյուսության» (1956 թ.), «Սովետական լիպերգներն ու պատմական երգային բանահյուսությունը» (1965 թ.), «Հայ ժողովրդական բանահյուսություն» (1967 թ.), բուհական դասընթացը, Ա. Նազիմյանի «Սովետահայ գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը» (1954 թ.), Աս. Մնացականյանի «Հայկական միջնադարյան ժողովրդական երգերը» (1956 թ.), Մ. Մկրտչյանի «Հայ ժողովրդական պանդխտության երգերը» (1961 թ.), Հ. Սահակյանի «17—18-րդ դդ. հայ աշուղներ» տպագրված և անտիպ երգերի ժողովածուն (1961 թ.), Լ. Փոբշեյանի «Նոր նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը» (1965 թ.), Մ. Ջանիովայանի «Թումանյանը և ժողովրդական էպոսը» (1969 թ.) և այլն։

Ժամանակակից հայ բանագիտության կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ նրա առավել աչքի բնկնող գործերը չեն մնացել ազգային շրջանակներում։ Նոր կարգերի ստեղծած հասարակական-քաղաքական քաղաքական պայմանների շնորհիվ դրանց մի նշանակալից մասը տարիների ընթացքում թարգմանվել է մեր երկրի և արտասահմանի մի շարք ժողովուրդներին լեզուներով, գտել միջազգային ճանաչում։

Իբրև օրինակ հիշենք «Սասունցի Դավիթ» էպոսի հյուսածո համահավաք բնագրի ուսերեն, ուկրաիներեն, բելոռուսերեն, վրացերեն, ադրբեջաներեն, անգլերեն, ֆրանսերեն, ռումիներեն, լեհերեն, չինարեն թարգմանությունները. հայ ժողովրդական հեքիաթների ուսերեն, ռումիներեն, հունգարերեն, չեխերեն, անգլերեն թարգմանությունները. հայ ժողովրդական առածներ

րի ու ասացվածքների ուսերեն, լեհերեն, չեխերեն թարգմանությունները, և այլն¹¹,

Հայ ժողովրդական բանահյուսության նյութերի հայտնաբերման, գրառման և ուսումնասիրության զուգընթաց Սովետական Հայաստանում, իբրև հետևանք սովետական իշխանության վարած ազգային քաղաքականության, վերջին հիսուն տարում զգալի գործ է կատարվել նաև մեր հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների (եզդի քրդեր, ադրբեջանցիներ) բանավոր ստեղծագործության հայտնաբերման, գրառման և ուսումնասիրության ուղղությամբ: Դրա պերճախոս ապացույցն են այն բազմաթիվ գրքերը, որոնք տարբեր տարիներ լույս են տեսել Սրեանում հիշյալ ժողովուրդների, մասնավորապես եզդի քրդերի բանահյուսության վերաբերյալ: Այդ գրքերից են Հ. Զնդիի «Կառ ու Քուլուկե Սլեմանե Սլիվի քրդական ժողովրդական վիպերգը» (1941 թ.), «Քրդական ֆոլկլորը» (1947 թ.), «Քյուռուզի էպոսի քրդական պատումները» (1953 թ.), «Մամե ու Զինե քրդական սիրային-հերոսական վիպերգը» (1956 թ.), «Քրդական ժողովրդական հեքիաթները» (1962 թ.), «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ» (1965 թ.), Գ. Թարվերդյանի «Քուռ-օզլի ադրբեջանական ժողովրդական վիպասանության հայկական տարբերակները» (1941 թ.), Ա. Երևանլիի «Հայ-ադրբեջանական ժողովրդական բանահյուսության կապերը» (1958 թ.), և այլն:

Ծիշտ է, նշված գրքերը չեն վերաբերում սովետահայ բանահյուսությանը, բայց ճիշտ է նաև այն, որ դրանց ստեղծումն ու հրապարակ գալը սերտորեն կապված են սովետահայ բանագիտության հասարակական, պատմական և ըստ ստեղծագործական ընդհանուր միջավայրի ու մթնոլորտի հետ:

Շարադրված փաստերը ակնառու ցույց են տալիս, որ սովետահայ բանագիտությունը իր կեսդարյա գոյության ընթացքում անցել է բավական արգասավոր ճանապարհ: Հենվելով անցյալի հայ բանահավաքների (Գ. Սրբվանձտյանց, Գ. Տեր-Աղեքսանյան, Տ. Նավասարդյան, Գ. Շերենց, Հ. Ծանիկյան, Ս. Հայկունի և այլն) և բանագետների (Մ. էմին, Ստ. Պալասանյան, Գ. Խալաթյան, Բ. Խալաթյան և այլն) ստեղծած լավագույն ավանդների վրա և քննադատորեն յուրացնելով այդ ավանդները, սովետահայ բանահավաքներն ու բանագետները մեծապես առաջ մղեցին հարազատ ժողովրդի հաղարամյակների խորքից եկող հարուստ ու գունեղ բանավեպի հայտնաբերման, գրառման և ուսումնասիրության շնորհակալ գործը, հասցնելով այն զարգացման նոր, առավել բարձր աստիճանի: Նրանց եռանդուն ջանքերի շնորհիվ վերջին հիսնամյակի ընթացքում հայ բանագիտությունը հարստացավ բազմաթիվ արժեքավոր ու մնայուն գործերով, որոնք աչքի են ընկնում ինչ-

¹¹ «Армянские сказки», перевод и примечания Я. С. Хачатрянца, Москва, 1933, «Давид Сасунский», армянский народный эпос, М.—Л., 1939. «Basme populaire armene», traducare de Stefan Velisar Teodoreanu si Sirag Cascanian, Cartearuse, 1958. «Пословицы и поговорки народов востока» (армянские пословицы), под редакцией И. Брагинского, Москва, 1961. «David de Sassoun», traduit de Frederic Feydit, Callimard, 1964. «Армянские народные сказки», вступительная статья, составление и примечания А. Т. Ганалаяна, Ереван, 1965. «Армянский фольклор», составитель Г. О. Карапетян, Москва, 1967. «Folktales of Armenia», Leon Surmelian, London, 1968, և այլն:

պես իրենց ընդգրկած բանահյուսական նյութերի նորոթյամբ ու հարստությամբ, այնպես էլ կատարված բանագիտական հետազոտությունների բարձր մակարդակով ու կարևորությամբ: Այդ գործերը, և դրանց մեջ առաջին հերթին Մանուկ Աբեղյանի հոյակապ հատորները («Հին գուսանական ժողովրդական երգեր», «Գուսանական տաղեր», «Ժողովրդական խաղիկներ», «Հայ վիպական բանահյուսություն») պատիվ են բերում ոչ միայն սովետահայ, այլև սովետական բանագիտությանն ընդհանրապես:

АРМЯНСКАЯ СОВЕТСКАЯ ФОЛЬКЛОРИСТИКА ЗА ПЯТЬДЕСЯТ ЛЕТ

Чл.-корр. АН Арм. ССР А. Т. ГАНАЛАНЯН

(Р е з ю м е)

В статье на основе конкретного материала показывается, что армянская советская фольклористика за полувековой период своего существования прошла весьма плодотворный путь развития. Опираясь на лучшие традиции, созданные армянскими фольклористами прошлого, критически восприняв все наиболее ценное из их наследия, советские фольклористы значительно продвинули вперед благородное дело по выявлению, фиксации и исследованию многовекового богатого устного творчества родного народа, подняв его на новую, более высокую ступень. Их энергичным усилиям обязана армянская фольклористика, обогатившаяся множеством капитальных трудов, отличающихся как новизной и разносторонностью содержащегося в них фольклорного материала, так и своим высоким научным уровнем. Эти труды—и среди них в первую очередь замечательные фолианты академика М. Абега—делают честь не только армянской советской фольклористике, но и советской фольклористике вообще.